նական և բժշկա-կենսաբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ազոտի օքսիդների ֆիզիոլոգիական ակտիվությունը մեծապես պայմանավորված է հենց այդ փոխազդեցություններով: Աշխատանքում ցույց է տրված, որ հեղինակների կողմից առաջին անգամ բնութագրված երկաթ-պորֆիրինի նիտրիտո կոմպլեքսը (Kurtikyan T. S., Ford P. C. Angew. Chem. Intern. Edit, 2006, 45, 492-496) բազմապիսի փոխակերպումների է ենթարկվում ազոտի օքսիդի և ազոտի երկօքսիդի ներկայությամբ: Բացահայտվել է ազոտի երկօքսիդի կապման եղանակը երկաթ-իոնի հետ կախված տրանս լիգանդի առկայությունից: Ցույց է տրվել, թե ինչպիսի փոխակերպումներ են կրում երկաթ-պորֆիրինի կոորդինացիոն ոլորտում ազոտի օքսիդները մեկը մյուսի ներկայությամբ: Իզոտոպ պարունակող միացությունների օգտագործմամբ բացահայտվել է այդ փոխակերպումների մեխանիզմը:

Ներկայացված աշխատանքում նկարագրված ազոտի օքսիդների մի շարք կոմպլեքսները երկաթ-պորֆիրինների հետ և նրանց մեջ տեղի ունեցող փոխակերպումները լույս են սփռում կենդանի համակարգերում ընթացող պրոցեսների վրա և ոչ միայն զգալի ներդրում են քիմիայի և կենսաբանության մեջ, այլ նաև հիմնարար գիտելիքներ են տալիս բժշկության մեջ կիրառություններ գտնելու հարցում:

Մեկդարյա հոբելյան

Ջրախորի հիդրոէլեկտրակայանը կառուցվել է ֆրանսիական ընկերությունների կողմից 1909 թվականին: Կայանում տեղադրվել է արագության ավտոմատ կարգավորումով «Պելտոն» տեսակի մեկ հիդրոտուրբին, որն ուներ 600 կՎտ հզորություն, իսկ եռաֆազ հոսանքի գեներատորը 6000 Վ լարման: Ջրի առումը իրականացվել է Ողջի գետից հասարակ ամբարտակի միջոցով: Մինչև հիդրոտուրբին հասնելը ջուրը խիստ թեք լեռնային հատված ունեցող ջրանցքով անցել է 2500 մետր:

Կայանի օգտակար ճնշումը կազմում էր 120 մետր: Կայանում արտադրված էլեկտրական էներգիան 10 կմ երկարության բարձր լարման օդային գծերով տրվում էր Ղափանի հանքերին և գործարաններին, որտեղ ցածրացնող ենթակայաններում ձևափոխվում էր ցածր լարման:


Ողջի գետի ջրի ծախսի խիստ տատանումների հետևանքով էլեկտրական էներգիայի տարեկան առավելագույն արտադրությունը հասնում էր մինչև 2 միլիոն կՎտ.ժամ:

Քաղաքացիական պատերազմի ընթացքում կայանը չի աշխատել, էլեկտրամեխանիկական սարքավորումների մի մասը և ջրանցքի զգալի հատվածը շարքից դուրս են եկել: 1920-ական թվականներից կայանի աշխատանքը վերականգնվել է:

Անրաժեշտ է նշել, որ Չայաստանում առաջին էլեկտրակայանը շահագործվել է 1903 թվականին՝ Դիլիջանում՝ 10 կՎտ հզորությամբ, երևանում՝ 1907 թ., ԼՂԳ-ում մինչև 1920 թ. եղել է մեկ հիդրոէլեկտրակայան՝ 30 կՎտ հզորությամբ:

Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ

Տեխնիկական գիտությունների թեկնածու





Սովորաբար դժգոհում են հուշագիրներից սուբյեկտիվության և ոչ-ճշգրիտ փաստերի համար: Բայց հուշագրության արժեքը, զոնե ինձ համար, հենց այդ սուբյեկտիվությունն է, այսինքն, դեպքերն ու մարդիկ կոնկրետ այսինչի կամ այնինչի ընկալմամբ: Գրանք չեն կարող փոխարինել պատմագիտական ուսումնասիրություններին. բայց այս վերջիններս էլ չեն կարող փոխարինել հուշագրությանը: Մարդկային-անհատական կենդանի ընկալումը ունի իր ճշմարտությունը, որը մատչելի է գիտական անկողմնակալ հայացքին (թեև

Ազատ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ

զժվար է պատմագիտության մեջ պատկերացնել մինչև վերջ անկողմնակալ հայացք): Վերջապես, հուշի սուբյեկտիվությունն ինքը հետաքրքիր է. ո՞վ է հուշագիրը, ի՞նչ հայացքների ու հոգեբանության տեր մարդ է: Չէ՞ որ մարդը իր ժամանակաշրջանի լավագույն դրսևորումն է: Գուց կարող եք կարդալ հուշեր, որոնք պատկուտ են բացառապես գրողի անհատականության, նրա մանր շահերի ու քեների շուրջ, նրա տիտղոսների պատմության շուրջ: Էհ, սա էլ իր ժամանակի մարդն է: Բայց կան հուշեր, որոնց հեղինակը գրեթե մոռանում է իր մասին և ոգևորված պատմում ուրիշների, ժողովրդի, երկրի մասին իր հայացքի սահմաններում:

Բոլորովին վերջերս լույս տեսավ Հայաստանի Խորհրդային Հանրապետության երկարամյա ղեկավարներից մեկի՝ Անտոն Քոչինյանի հուշերի գիրքը: Նախ, ինչքան գիտեմ, սա Հայաստանի այդ մակարդակի ղեկավարի միակ գիրքն է: Քոչինյանի ոչ միայն նախորդները՝ Իսանյանը, Գրիգոր Հարությունյանը, Սուրեն Թովմասյանը, Յակով Զարոբյանը, այլև հաջորդը՝ Կարեն Դեմիրճյանը, հնարավորություն կամ պատեհություն չունեցան պատմելու իրենց կյանքի և փորձի մասին: Անշուշտ, դրանք էլ շատ հետաքրքրական պետք է լինեին: Համենայն դեպս, Քոչինյանի հուշերը հարուստ և ուսանելի նյութ են պարունակում իր ապրած ժամանակի մասին, որոշ իմաստով անզնահատելի նյութ: Գրում է մի մարդ, որն հասակ է առել Հայաստանի Խորհրդային Հանրապետության հետ միասին, վկան ու մասնակիցն է եղել այդ հանրապետության կյանքի կարևորագույն իրադարձությունների: Եվ իհարկե, մենք նրա հուշերի մեջ պետք է փնտրենք այն մթնոլորտը, որը եղել է հանրապետությունում երեսնական-վաթսուական թվ.Քոչինյանը թեև հնարավորություն չի ունեցել բարձր և սխտեմատիկ կրթություն ստանալու, բայց բնատուր ընդունակությունների և ուժեղ բնավորության շնորհիվ, վաղ հասակից մտնելով հասարակական և քաղաքական գործունեության ասպարեզ, հասել է Հայաստանի ղեկավարի՝ Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղարի պաշտոնին: Մինչ այդ, երկար տարիներ գլխավորել է ՀԽՍՀ կառավարությունը: Շատ բան է տեսել, շատ բան է հասկացել, այնքան շատ, որ կրավարարներ սովորական մի քանի կյանքերի:

Քոչինյանը իր ժամանակի մարդն էր, դաստիարակված իդեալներին, ժողովրդին ծայրաբեր ոգով, և իր անձնական կյանքը նրա համար շատ մեծ արժեք չի ունեցել սերունդների ուղարկությանը հանձնելու համար: Ի՞նչ է տեսել այսինչ գյուղում, այսինչ շրջանում (գրեթե պատանեկան տարիքից կուսակցական հանձնարարություններով եղել է Հայաստանի ամենատարբեր շրջաններում), ինչպե՞ս են ապրել մարդիկ, ի՞նչ հոգսեր են ունեցել ահա այն, ինչ նրան հետաքրքրում է: Եվ քանի որ գարնանային հիշողություն է ունեցել, մտապահել է այդ բոլորը և հետո գրի առել: Իսկ նրա հիշողության մասին առասպելներ էին պատմում: Գիտեր ոչ միայն շրջանների և գյուղերի հին ու նոր ղեկավարներին, այլև միջին օդակի աշխատողներին, հասարակ գյուղացիներին, հիշում ու հետաքրքրվում էր նրանցով: Բայց սա սուկ մեխանիկական հիշողության խնդիր չէ. սա հետաքրքրություն է մարդու հանդեպ, մի բան, որն այնքան կարևոր է ճակատագրի բերումով ղեկավարի դիրքի հասած մարդկանց համար: Չեմ կարող չհիշել մի դրվագ նրա երիտասարդ տարիների հուշերից, որն ինքը պատմում է պարզ ու անգարդ բառերով, մինչդեռ դա իսկական ռոմանտիկ-ողբերգական պատմություն է մեր անցյալի մասին: Հերթական աշխատանքից մեկնելիս ճանապարհիս տեսնում է սևազգեստ մի կնոջ, և կարծելով թե տարիքով կինը օգնության կարիք ունի, մոտենում է: Կինը պատմում է իր կյանքի տխուր պատմությունը: Ջրի տերը եղել է մի աղքատիցն ինքն, որ գյուղացիներին ոռոգման ջուր տալու համար նրանցից պահանջել է տան գեղեցկուհուն լինի

կինը, հարք, աղջիկը: Իսկ ջուրը կյանքի հարց է եղել: Շատերը գերադասել են սովամահ լինել քան պատվազուրկ: Այդ կինը ամուսնու հետ խորհրդակցել է, և որոշել են, որ կզեն մի ամիս կծառայի հարուստին, այսպես երեխաները սովամահ պետք է լինեն: Ամուսինը ջուրն ստացել է, հողամասը ջրեչ, հետո նույն վայրում, որտեղ Քոչինյանը հանդիպել է կնոջը, ինքնասպանություն գործել: Ասում են, որ կյանքը երբեմն ավելի հետաքրքրական սյուժեներ է տալիս, քան կարող է ստեղծել ամենավառ երևակայությունը: Հետո Քոչինյանը հիշում է, որ բարձր դիրքի հասնելուց հետո հատուկ ուշադրություն է դարձրել այդ շրջանի ոռոգման համակարգի ստեղծմանը...

Քոչինյանը տարբեր մարդկանց է հիշատակում իր գրքում շարքային գյուղացուց մինչև խորհրդային պետության բարձրագույն ղեկավարները, բնութագրում է բոլորին, և բնութագրում մի հայացքով, որ ես կանվանեի գեղջկական իմաստություն: Քոչինյանը, անշուշտ, շատ էր բարձրացել գեղջկական կյանքից ու մտածողությունից, բայց, բարեբախտաբար, պահպանել էր այդ իմաստությունը: Հարգանքով է խոսում և հասա-



րակ մարդկանց, և՜ պետության բարձրագույն ղեկավարների մասին: Բայց, իհարկե, զոնե ինձ համար, հատկապես հետաքրքրական են երկար տարիների կուսակցական և պետական գործչի դիտողությունները իր կուսակցության և խորհրդային պետության քաղաքականության մասին: Ես, օրինակ, մեր գյուղի փորձով, մեծերի պատմածով, իմ կարգա-

ցած գրքերով, գիտեի, որ գյուղատնտեսության համայնացումը ծանրագույն հարված հասցրեց խորհրդային ժողովուրդների գյուղատնտեսությանը: Բայց այնպիսի խիստ գնահատական, ինչպիսին տալիս է Քոչինյանը այդ քաղաքականությանը, ես, թերևս, դեռ չէի հանդիպել: Ամեն դեպքում, իբրև ակամատեսի, այն էլ ոչ շարքային ակամատեսի, նույն կուսակցության ու պետության մեջ բարձրագույն դիրքերի մարդու գնահատական, դա շատ տպավորիչ է, ցնցող: Ահա այդ գնահատականը. «Կոլտնտեսությունների կազմակերպումը բոլորի լուրջ շարժում առաջ բերեց. ՆԷՊ-ից հետո գյուղացին չէր ցանկանում իր փոքր սեփականությունից հրաժարվել... Կուսակցությունը, սակայն իր այսպես կոչված կողմերատիվ պլանը բռնի ուժով իրագործում էր: ...Կուսակցությունը դիմեց ահավոր միջոցի նույնիսկ միջակ գյուղացիներին կուլակաբափ արեց և արտոքեց գյուղերից՝ ահաբեկելով մյուսներին, որոնք ստիպված ճարահատյալ կոլտնտեսություն էին մտնում: Շատերը գենը ձեռներին սկսեցին կռվել կառավարության դեմ՝ լիկվիդացնելով կազմակերպված կոլտնտեսությունները... Մեր հանրապետության բոլոր շրջաններում նման դիմադրություններ տեղի ունեցան... Ինչպես դարավագազի, այնպես էլ լոռեցի խռովարարների կյանքը սակայն երկար չտևեց, պետական օրգանները Վանիկային Թիֆլիսի մոտ գնացրում խիցեցին, իսկ մյուսներին բանտարկեցին»: Քոչինյանը գաղափարախոս և տեսաբան չէր. բայց առողջ դատողության տեր և գյուղացիության հոգեբանությունը հասկացող մարդ էր, և բերված տողերը հենց դրա վկայությունն են:

Քոչինյանի այսպիսի տարիները, առհասարակ խորհրդային հասարակության պատմությունը այնքան բարդ են և բազմաշերտ, որ մեկ ընդհանուր գնահատական դրան տալ հնարավոր չէր: Իմ բերած տողերը միայն վկայությունն են Քոչինյանի անկեղծության և սրափոքային: Երբ նա գրում է Հայաստանի գյուղական շրջանների, Երևանի և մյուս քաղաքների վերակառուցման մասին, նրա պարզ պատմությունները նույնքան տպավորիչ են դառնում: Քոչինյանը մի մարդ է, որ տեսել է Հայաստանը քսան-երեսնական թթ., տեսել է գետնափոր գյուղերը, գյուղացիների միջնադարյան կենցաղը, ճանապարհների և տրանսպորտային միջոցների բացակայությունը, ոտով չափել

Հայաստանը: Եվ երբ այդ մարդը շրջան առ շրջան ներկայացնում է վերափոխումները, վերակառուցված բնակավայրերը, հին ցեխաշեն գյուղերի նոր տեսքը համեմատելով քաղաքի հետ և երբեմն էլ գուցե ոգևորության մեջ չափազանցելով, ընթերցողը հավատում է նրան: Կրկնում եմ, գաղափարախոսը կամ նեղմիտ կուսակցականը չէ, որ խոսում է այսպիսի դեպքերում, այլ հայ մարդը, որն անկեղծորեն ուրախանում է իր հայրենիքի նոր կյանքով: Մանավանդ ինքը ուղղակիորեն մասնակցել է նոր երկրի կառուցմանը:

Անտոն Քոչինյանը իր պաշտոնի բերմամբ շատ է շփվել հայ մտավորականության հետ և պատմում է հայ մշակույթի գործիչների մասին: Այնուամենայն ու սիրով է հիշում Ավետիք Իսահակյանին, խորին հարգանքով է գրում Հրաչյա Քոչարի մասին: Ահա հայ պետական գործչի բնորոշ գիծը...

Քոչինյանը ավելի հաճախ հրատարակում է կատարվածի մասշտաբային նկարագրությամբ. երևում է երկար տարիներ Հայաստանում ամենաբարձր պաշտոններ զբաղեցրած մարդու մտածողությունը, որը միշտ զբաղված է եղել խոշոր, համահասարակական խնդիրների լուծմամբ: Այդ էջերը, հնարավոր է, շատ չհետաքրքրեն սովորական ընթերցողին: Բայց հենց այդ էջերում երևում է Քոչինյան-հուշագրի շատ բնութագրական գիծը: Ի՞նչ է արվել երկրում, ի՞նչ է ստացել հայ մարդը այդ տարիներին - ահա նրան հետաքրքրող գլխավոր խնդիրը: Իր սեփական ներդրման մասին գրեթե չի էլ խոսում: Գոնե գրված էջերում մենք բողոք էլ չենք տեսնում իրեն աշխատանքից հանելու, աղքատ դեռ ետանդով լի ու փորձված մարդուն բռնակալի ուղարկելու դեմ: Հուշերն անավարտ են, և եթե կարողանար ավարտել, հնարավոր է այս մասին էլ գրեր: Բայց եղած ծավալուն գրառումները երևում է մեկը, որ քիմիանդիր չէ, որ չի սևեռված իր անձի, իր բարեկամների և բշխամիների վրա: Հանրապետության ճակատագիրը, ժողովրդի վիճակը - ահա նրան հետաքրքրող խնդիրը: Սա է ժամանակի նշաններից մեկն էր: Խորհրդային տարիները իրենց վնասն հասցրին մարդկանց, մանավանդ նրանց աստիճանաբար զրկելով ազատ մտածելու հնարավորությունից: Բայց այդ նույն կարգերը դաստիարակեցին գործչի մի տիպ, որն իսկապես պատասխանատվություն էր զգում իր ժողովրդի հանդեպ: Ես չեմ կարողանում այս մասին չմտածել և Քոչինյանին չհամեմատել այսօրվա պետական մարդկանց հետ, երբ կարդում եմ Քոչինյանի պատմությունները շրջաններում նոր արտադրություններ ստեղծելու մասին, որպեսզի մարդիկ աշխատանք ունենան և չլքեն Հայաստանը: Մտածել են, մտահոգվել են, Մոսկվային համոզել են և նոր գործարաններ են կառուցել շրջկենտրոններում ու գյուղերում: Եվ դրա շնորհիվ ԽՍՀՄ փուլումից առաջ Հայաստանում երբեք ու կես միլիոն հայ էր ապրում, և մենք բոլորս ուրախանում էինք դրա համար: Իսկ այսօր Հայաստանում պաշտոնական տվյալներով մնացել է երեք միլիոն հայ: Շեշտում եմ՝ պաշտոնական տվյալներով:

Քոչինյանի հուշերը կարդալուց հետո նորից ու նորից մտածում եմ մեր պատմության խորհրդային շրջանի գարնանային բարդության և հակասականության մասին: Ինչպես է շոկեցրել և սև և սպիտակ գույների հերթազարթույամբ, իր հերոսի կենսագրության հակասականությունը ցույց տալու համար, այնպես էլ մենք պետք է երևի փորձենք հասկանալ խորհրդային պատմությունը իր հակասականությամբ: Բայց մի ամբողջ երկրի պատմությունն հասկանալը շատ ավելի զժվար է, քան մեկ մարդու, բող որ առաջնորդի: Եվ նրանք, որոնք համատարած սև գույներով են ներկում խորհրդային պատմությունը, և նրանք, ովքեր իդեալականացնում են այդ պատմությունը, հավասարապես սխալվում են: Զգիտեմ, երբեք մենք կկարողանանք ճշմարիտ գնահատականներ տալ խորհրդային տարիներին: Բայց պարզ ունակացումը շատ է աղքատացնում այդ պատմության ողբերգությունը և ռոմանտիզմը, հավատն ու ատելությունը, կորուստներն ու ձեռքբերումները:

Այս գիրքը կարդալիս հիշեցի Նաիրի Զարյանի վերջին շրջանի բանաստեղծություններից մեկը՝ «Այս տունը»: Դա կարելի էր բնաբան դնել Քոչինյանի գրքին.

*Ծիծաղեցեք, մենք լավ գիտենք թե ինչ
Անպարտելի քավարանով անցանք,
Ինչպես մենք համր, խույ ու կույր էինք,
Ինչպես կռանալով կուզիկ դարչանք:*

*Ծիծաղեցեք, բայց մի ծաղրեք կրակը,
Մի անգունեք ազնիվ երագողին:
Թաղեք ընդմիջուր, ինչ որ արդեն մտած է,
Եվ անբասիր անցեք դուք չեղ նուրին:*

Քոչինյանը այն մարդկանցից էր, որոնք կառուցեցին հայոց տունը: Լավ, թե վատ, բայց կառուցեցին: Դրա համար նրանք արժանի են մեր երախտագիտությանը:

Գիրքը տպագրության է պատրաստել պատմական գիտությունների դոկտոր Վլադիմիր Պետրոսյանը, որը և գրել է հանգամանակից, անավարտ հուշերի պակասը լրացնող ուսումնասիրություն Անտոն Քոչինյանի կյանքի ուղու մասին: Հմուտ պատմաբանի բերած փաստաթղթերը շատ դեպքերում նոր լույս են ափսոսանքով առաջադրել խորհրդային Հայաստանի պատմության տարբեր կողմերի վրա: Քոչինյանի կերպարը ամբողջացնում են նրա ժամանակակիցների հուշերը՝ Հայաստանի այդ վաստակավոր պետական գործչի մասին, որոնք տրված են գրքի վերջում:

Բուխարեստի բազմաթիվ թանգարաններից 3-ը կրում են տարբեր Ավագյանների անուններ

Գրիգոր Ավագյանի թանգարանը

Գրիգոր Ավագյանը ծնվել է 1900 թ. Արթուրյան քաղաքում (հետագայում Բելգորոդ-Դնեստրովսկի, Ուկր. ԽՍՀ): Բնակություն է հաստատել Բուխարեստում և դարձել պատմության պրոֆեսոր: Արթուրյանում պեղումներ կատարելիս հայտնաբերել է Կիլիկիայի հայկական թագավորության բազմաթիվ դրամներ: Էտրուսկների ճարտարապետության ու արվեստի մասին նրա ուսումնասիրությունները ունեն միջազգային համբավ: Հայերենից ռումիներեն է թարգմանել հայ միջնադարյան տաղերգուների որոշ երկեր: Եղել է նաև նկարիչ և 1924 թ. Բուխարեստում բացել է անհատական ցուցահանդես, որն արժանացել է ռումինական մամուլի բարձր գնահատականին:

Գ. Ավագյանը ունեցել է արվեստի գործերի հարուստ հավաքածու, որը նվիրել է Ռումինիային: 1978 թ. նրա հավաքածուն տեղակայված է եղել պետական շենքում: Հավաքածուում կան գեղանկարչական հազվագյուտ գործեր, ինչպես նաև ճապոնական, ինդոնեզական, եգիպտական, հնդկական, եթով-

պական գեղարվեստական հին իրեր: 1978 թ. բանգարանի տնօրենը եղել է ինքը՝ 77-ամյա Գ. Ավագյանը: Գրիգոր Ավագյանի թանգարանը Ռումինիայում համարվում է ամենահռչակավորներից:

Հրանտ և Բեաթրիս Ավագյանների արվեստանոց - թանգարանը

Հրանտ և Բեաթրիս Ավագյանների արվեստանոց-թանգարանը Բուխարեստում է: Գեղանկարիչ Հրանտ Ավագյանի հավաքածուն բաղկացած է շուրջ 400 ցուցանմուշից, որոնց մեջ կան ռումինական և հին արվեստների գործեր, բրոնզե իրեր, տիբեթյան, չինական և սիամական քանդակներ, պարսկական բրուտագործության 17-րդ դարի նմուշներ, գոթական, իտալական և իսպանական կահույք, հայկական հին գորգեր և այլն: Առանձին բաժնով ներկայացված են նկարչի գեղանկարչական աշխատանքները: 1971 թ. Հրանտ և Բեաթրիս Ավագյան ամուսիններն

իրենց հարուստ և խայտարեղ հավաքածուն նվիրել են Բուխարեստի ռումինական պետական թանգարանին:

Հ. Գրիգորյանը նվիրատվություններ է արել նաև Հայաստանի պատկերասրահին:

Կարապետ Ավագյանի հավաքածուն՝ որպես Բուխարեստի պետական թանգարանի մասնաճյուղ

Կարապետ (Կարայիս) Ավագյանը (1908-1967) եղել է ջութակահար, երաժշտագետ, Բուխարեստի կոնսերվատորիայի ջութակի պրոֆեսոր և մասնագիտական մի քանի գրքի հեղինակ: Ունեցել է գեղանկարների հարուստ հավաքածու, որը նվիրել է Բուխարեստի պետական թանգարանին: Այդ հավաքածուի հիման վրա ստեղծվել է այդ թանգարանի մասնաճյուղը:

Մարդու հասակը և... բարեկեցությունը

Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի (Մանկտ-Պետերբուրգ) մասնագետները իմի են բերել արտասահմանյան և հայրենական հետազոտությունների արդյունքները, որոնք վերաբերել են տարբեր երկրներում և տարբեր դարաշրջաններում հասարակության բարեկեցության ազդեցությունը մարդկանց հասակի վրա և հանգել այն հետևության, որ այս կամ այն հանրության մեջ մարդու միջին հասակը (բարձրությունը) արտացոլում է նրա բարեկեցության աստիճանը:

Պրոֆեսոր Բորիս Միրոնովի տվյալներով այսօրվա երիտասարդ պորտուգալացիների հասակը 9 սանտիմետրով ավելի է, քան 1900-ական թվականներին ապրած նրանց հասակակիցների հասակը:

Համապատասխանաբար Արևմտաեվրոպական երկրների կանանց և տղամարդկանց միջին հասակը գերազանցում է Կենտրոնական և Արևելյան եվրոպական երկրների բնակիչների միջին հասակը, որը առաջիններում տնտեսական զարգացման ավելի բարձր աստիճանի արդյունք է:

Վերջին 150 տարում եվրոպացիների միջև հասակը աճել է ավելի արագ, քան սպիտակ ամերիկացիներից: Այսօր բողոքական բնակչությանը եվրոպական երկրների մեծ մասը միջին հասակով առաջ է անցել ԱՄՆ-ի բնակիչներից, քեև 19-րդ դարում սպիտակ ամերիկացիները ընդհանուր առմամբ աշխարհի ամենա-

բարձրահասակ մարդիկ էին:

Այսօր ամենաբարձրահասակ եվրոպացիները հոլանդացիներն են, շվեդները և նորվեգացիները, ինչպես նաև դանիացիները, բրիտանացիները և գերմանացիները (183-184 սմ 178 սանտիմետրերի դիմաց), սակայն, ինչպես և նախկինում, ԱՄՆ-ի յուրաքանչյուր քաղաքացու բաժին ընկնող համախառն արտադրանքը ավելի բարձր է: Վկայակոչելով այս բնագավառի հեղինակավոր մասնագետ, Մյունխենի համալսարանի պրոֆեսոր Ջոն Կոմոսին, Բորիս Միրոնովը գրում է, որ սույն պարադոքսի բացատրությունը չափազանց պարզ է. Եվրոպայում ԱՄՆ-ի համեմատությամբ, ավելի քիչ է սոցիալական անհավասարությունը, ավելի կատարյալ է սոցիալական ապահովության համակարգը, բարձր է սոցիալական անվտանգությունը, ավելի առողջ է էկոլոգիան, պակաս է աշխատանքային ծանրաբեռնվածությունը, ավելի երկար է հանգստյան ժամանակը, ավելի որակյալ է սնունդը:

Պրոֆեսոր Միրոնովը նշում է սակայն, որ անհատական մակարդակում կյանքի որակը մարդու հասակի գլխավոր չափանիշը չէ: Նրա կարծիքով անհատի անբրոպարկան ցուցանիշները, ներառած նաև մարդու հասակը 80-85 տոկոսով պայմանավորված է գենետիկայով, և 15-20 տոկոսով՝ ապրած միջավայրի պայմաններով:

Միջավայրի պայմանները գերակշռող են դառնում սոցիալական մակարդակում, երբ գնահատվում են էթնիկական նույն

հոծ խմբերի հասակի չափը, որոնք սակայն տարբերվում են կենսամակարդակի աստիճանով: Եվ սա այսպես է, որովհետև սոցիալական հոծ խմբերի և համակեցությունների գենոֆոնդը գործնականում հաստատուն արժեք է:

Կենսակերպի պայմանները մարդու հասակի աճի վրա ազդում են տարբեր գործոններով՝ կանոնավոր և ճիշտ սնունդը, բժշկությունը, երկարատև ուսումնառությունը, ֆիզիկական ծանրաբեռնվածության նվազումը, բնականաբանապես լավ պայմանները:

Հետազոտողները պնդում են, որ հասարակության բարեկեցությունը կապված է կենսաստատուսի հետ՝ էներգիայի ընդունման և ծախսի հարաբերության հետ: Սովորական գոյության համար մարդու անհրաժեշտ է 1 կիլոկալորիա մեկ կիլոգրամ քաշի համար, մտավոր աշխատանքի համար 1,7 կկալորիա, ֆիզիկական չափավոր աշխատանքի դեպքում՝ 2,1 կկալորիա, ծանր ֆիզիկական աշխատանքի դեպքում 3,0 կկալորիա: Այսինքն այն դեպքերում, երբ կենսաստատուսի պահպանմանը ծախսվում է բնակչության եկամուտների մեծ մասը, կապը բարեկեցության և կենսաստատուսի միջև ավելի սերտ, մինչդեռ զարգացած երկրներում այդ կապը թույլ է:

Բորիս Միրոնովը տեղեկացնում է, որ անբրոպարկան որպես գիտություն ծնվել է 1969 թվականին, երբ ֆրանսիացի նշանավոր պատմաբան Է. Լե Ռուա Լադյուրին հրատարակեց իր աշխատությունը և ցույց տվեց, որ 19-րդ դարում ֆրանսիական նորակոչիկների հասակը և բնակչության բարեկեցությունը մշտապես պայմանավորված էին մեկը մյուսով:

«ՆԱՌԻԿԱ Ի ՓԻՉԸ»

Ձրի թմրանյութ... ակնկալվող շահի համար

Ոստիկանության լեյտենանտ Խալո Կայգերը հերթապահությունից հետո փոխում էր համազգեստը և գնում տուն: Ծանապարհին նա պարտադիր մեկ գավաթ պաղպաղակ էր ուտում, որից հետո նրա տրամադրությունը բարձրանում էր: Եվ այսպես ամեն օր...


Շուտով ոստիկանության նրա գործընկերները սկսեցին տարօրինակություններ նկատել Կայգերի պահվածքում. առանց պատճառի նա հանկարծ սկսում էր ծիծաղել, գեկուցազիր գրելը ընդհատել և երգել: Մի անգամ էլ, երբ պետք դիտորդություն արեց, Կարգերը լեզու ցույց տվեց նրան: Պետի հրամանով ոստիկանության բժիշկը սկսեց գաղտնի հետևել Կայգերին: Երկու օր հետո բժիշկը գեկուցեց, որ Կայգերը անընդհատ «կայֆի տակ է»:

Ոստիկանության թմրամոլ աշխատակից՝ սա արդեն խայտառակություն էր:

Պետը հրամայեց գաղտնի հետևել Կայգերի յուրաքանչյուր քայլին: Մի քանի օրից պետին գեկուցեցին, որ ոչինչ չեն նկատել, բացի նրանից, որ տան ծանապարհին նույն կրպակավաճառից Կայգերը միշտ պաղպաղակ է գնում և ուտում: Ուրեմն, եթե որևէ բան է տեղի ունենում Կայգերի հետ, ապա դա կապված է պաղպաղակի հետ:

Ոստիկանները որոշեցին զբաղվել պաղպաղակավաճառով: Գաղտնիքը շատ շուտով բացահայտվեց. պարզվեց, որ սույն անձնավորությունը պաղպաղակի յուրաքանչյուր բաժակի մեջ որոշ քանակի կոկաին է խառնում: Եվ երբ հաճախորդները կամաց-կամաց սովորում են թմրանյութին և այլևս առանց այդ բաժնի չեն կարողանում դիմանալ, պաղպաղակավաճառը նրանց առաջարկում էր թմրանյութ գնել: Բնականաբար, արդեն թմրամոլ դարձած հաճախորդները հոծարակաճ համաձայնվում էին:

«Պաղպաղակավաճառը» հիմա բանտում է, իսկ ոչնչից անտեղյակ լեյտենանտ Կայգերը բուժվում է թմրակախվածությունից ազատվելու համար:



ARMENPRESS



«Բոլոր ազգերը բող հասնեն յուսին, Միայն քե Հայ Ազգն հասնի Մասիսին»
(Հովհ. Շիրազ)

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ քրեալից անդամ Աշոտ Մելքոնյանի հեղինակային ջանքերով հայոց ինքնության, ինչպես նաև համայն մարդկության վերածննդի խորհրդանիշ բերիական Արարատ լեռը վերջերս վերախմանավորվել ու վերաթմբորվել է «Արարատ. Հայոց անմահության խորհուրդը» պատմավավերագրական ֆիլմով (Երևան, 2008) և գիտահանրամատչելի աշխատության մեջ (Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2008, 96 էջ + 114 լուսանկար: Տպագրվել է «Թեթև կենտրոն» հիմնադրամի հովանավորությամբ):

Ֆիլմի հիմքում ընկած է հինգ բաժիններից բաղկացած հիշյալ համանուն աշխատությունը, որոնք երկուսն էլ նվիրված են հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի ծննդյան 200-ամյակին (1809 թ.) և Գորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի հետ Խ. Աբովյանի Արարատի գագաթը բարձրանալու 180-ամյակին (1829 թ.) և բացվում են մենագրության ու սցենարի հեղինակ Աշոտ Մելքոնյանի խոսքերով: «Ամեն մի ժողովրդի կյանքում ազգային խորհրդանիշներն ունենում են իրենց ուրույն տեղը, դերն ու նշանակությունը: Գրանք հաճախ խոսեցնում են տվյալ ազգի նկարագիրը, մարմնավորում հայրենիքի կերպարը, իմաստավորում նրա գոյակերպը: ...»

ղափարը: ...Մասիս տարբերակը ...հնդեվրոպական ծագում ունի. Մասիսու, որ նշանակում է բարձր, գերնագույն, վեհասքանչ, փառահեղ ու անհասանելի լեռ»:

Այս հեղինակը ներկայացրել է Նոյան տապանի մասին աստվածաշնչային պատմությունը, Արարատ լեռան հետ կապված ժողովրդական առասպելները:

Երկրորդ գլխում «Աստվածընտրյալ լեռան անհաղթահարելիության խորհուրդը. Արարատը հաղթահարելու փորձեր (IV դար - XIX դարի առաջին բառերը)», Ա. Մելքոնյանը պատմական ժամանակագրությամբ ներկայացրել է հայ և օտար հիշատակողների (Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ և այլոք) վկայությունները Արարատ լեռ բարձրանալ ցանկացած, ինչպես նաև՝ մտադրված և անհաջողության մատնված նախաձեռնողների կամ իրագործել ցանկացածների շարքը սկսած 4-րդ դարից:

Հեղինակը կարողացել է հ մի բերել և ներկայացնել տարբեր ժամանակներում, տարբեր անձանց կողմից Արարատի մասին բողած ու շագրավ ու հետաքրքրական, տպավորիչ ու բնութագրական հիշատակությունները, որոնք հասկանալի են դարձնում սրբազան լեռան առեղծվածային, բայց և իրական էությունը: Ահա դրանցից մի քանիսը. «Արմենիայի այդ երկու գագաթների վրա գտնվում են Հայաստանի բազավորների շիրիմները՝ իրենց գանձերով: Գրանք միտումնավոր կախարհված են, որպեսզի անկարելի լինի դրանց վրա բարձրանալը» (13-րդ դարի սկիզբ, արաբ հեղինակ Շահաբադդին), «Հայաստանի կենտրոնական մասում վեր է խոյանում մի հսկա, մեծ և բարձր լեռ, որի կատարին, ասում են, գտնվում է Նոյ-



անձնական, այսպես գիտական նպատակներով Արարատ բարձրացած անհատների ու արշավախմբերի տարեգրությունը:

Երջադարձային էին 1952 թվականից սկսյալ ֆրանսիացի բասկ Ֆերնան (Ֆերդինանդ) Նավարայի դեպի Արարատ իրականացրած մի շարք ուղևորությունները, երբ 1955 թ. նա իր 12-ամյա որդու՝ Ռաֆայելի հետ վերելքի ժամանակ սառցադաշտի մեջ հայտնաբերել էր ավելի քան մեկ մետր երկարության գերան և բուրբակաճ ոստիկանության ստուգումներից խուսափելու նպատակով, այն երեք մասի բաժանելով, հասցրել եգիպտական ու իսպանական հետազոտողներին, որոնք էլ պարզել էին դրա շուրջ 5 հազ. տարվա՝ ջրեղեղի ժամանակակից լինելը:

Գրքում պրոֆեսորը մինչև այժմ չբարձրաձայնված հիշարժան փաստ է ներկայացրել հանրությանն այն մասին, որ 2006 թ. հուլիսին իրականացվել է մեր ամենամասնավազու բանաստեղծ Հովհաննես Շիրազի նվիրական փափագը: ԵՊՀ դասախոս Գևորգ Հանյանի, լեռնագնաց Հրաչ Մակարյանի, Ալբերտ Տոնեյանի և Մխիթար Մխիթարյանի ջանքերով Մեծն Շիրազի սիրուն իր հավերժական հանգիստն է գտել Արարատի գագաթի հավիտենական սառցաշերտի մեջ:

Դեպի Արարատ վերելքի օրը խորհրդանշական է ընտրվել Ա. Մելքոնյանի կողմից. այն սկսվել է օգոստոսի 8-ին և ավարտվել 10-ին՝ Սևրի դաշնագրի օրը, որն էլ, ինչպես հեղինակն է նշում, «վերելքի գաղափարական իմաստավորումն էր»:

Գիրքն օժտված է նաև հարյուրից ավելի սև-սպիտակ և գունավոր լուսանկարներով:

2007 թ. օգոստոսի 10-ին՝ Սևրի դաշնագրի օրը, Արարատի գագաթ հասնել ուխտած գիտնականների արշավախմբի համատեղ գործակցության մեկ այլ խորհրդանշական և տրամաբանական արդյունքն է մնալուն ֆիլմի նկարահանումը: Այն իրավամբ իր արժանի տեղը պիտի գրավի հայրենական ֆիլմարտադրության պատմության մեջ՝ դառնալով բերիական Արարատի համալողմանի պատմության տարեգրությունը ներկայացնող արժանավոր առաջնիկ:

Մեծագույն հետաքրքրությամբ է դիտվում Ա. Մելքոնյանի հեղինակած «Արարատ. Հայոց անմահության խորհուրդը» ֆիլմը, որի սցենարի հիմքում ընկած են համանուն գրքի առանցքային դրույթները:

«Արարատ» ֆիլմի ստեղծմանն աջակցել է արշավի մասնակից, «Թերմոտու-Ար» ընկերության հիմնադիր տնօրեն, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Լիսյաբիտ Պետրոսյանը:

Ֆիլմն ավարտվում է Արարատ լեռան գագաթից պատմաբան Ա. Մելքոնյանի որպես պատգամ հնչող խորհրդանշական և արված հետևյալ իմաստակից խոսքերով. «...Ամեն տեսակի դժոխային ճամփաներով անցանք, բայց Հայրենիքի գաղափարը վեր է ամեն ինչից... Արարատը աշխարհի քաղաքակրթության շրջանում Հայ Ազգի ունեցած տեղի ու դերի խորհրդանիշն է... Մենք ամեն ինչ արեցինք, որ օգոստոսի 10-ին հասնենք և հաղթեցինք... Մա միայն սկիզբն է... Այնպես որ՝ Կամք, Հավատք, Հաղթանակ, Հայրենիք...»:

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի
ավագ գիտաշխատող



Պատմական ճակատագրի բերումով Արարատ-Մասիսը ոչ միայն վեհության, անհասանելիության, կատարելության մարմնավորում է, այլև 1915 թ. հայոց մեծ եղեռնից ու հայ ժողովրդի հայրենագրկության հետո՝ բռնազավթված հայրենիքի և այն նորեն իր արդար գավակներին վերադարձնելու համոզմանի անկրկնելի խորհրդանիշ, աշխարհասփյուռ հայության միասնականության փարոս»:

Աշխատության Առաջին գլուխը հեղինակը վերնագրել է «Արարատ-Մասիսի վաղնջական պատմությունից (պատմաաշխարհագրական ակնարկ)», որտեղ Ա. Մելքոնյանը հանրամատչելի կերպով լուսարբանել է Արարատ-Մասիս անվանումների ստուգաբանությունը՝ նշելով. «Քառի հիմքում ընկած է Հայկական ողջ լեռնաշխարհում մշտապես հանդիպող արիական մայր ժողովրդի ինքնանվանման արմատը՝ արք: Իգուր չէ, որ այդ բառարմատի մեջ գտնում ենք բացառապես ազնվագարն ու կենսատու բովանդակություն պարունակող իմաստներ: Նրանից է ծագում առաջին հերթին մեր երկրի Ար-մենիա՝ արի, ազնվագարն ու քաջ մարդկանց երկրի անունը և նրա խորհրդանիշ Արարատի՝ արարչի կողմից արարված լինելու գա-

յան տապանը: Այդ լեռն ամբողջովին անցնելու (շրջանցելու - Ա. Մ.) համար երկու օրը բավարար չէ: Լեռան գագաթին այնքան մշտական ձյուն կա, որ ոչ ոք չի կարող բարձրանալ, որովհետև ձյունը երբեք չի հալում, և հարատևրեն ավելանում է նոր տեղումներից» (1271 թ., Մարկո Պոլո), «...Ոչ ոքի չի հաջողվել բարձրանալ այս լեռը «...միայն այն պատճառով, որ բարձրյալն այդ չի կամենում»» (1318 թ., կարողիկ հոգևորական Օդորիկոս Պորոնենն) և այլն:

Գրքի Երրորդ գլուխը վերնագրված է «Նոյնահապետից հազարամյակներ անց՝ Արարատի գագաթին. Ֆրիդրիխ Պարրոտ և Խաչատուր Աբովյան»: Հեղինակն այս բաժինն ամբողջությամբ նվիրել է Գորպատի (այժմ՝ Տարսու, Էստոնիա) համալսարանի պրոֆեսոր Ֆ. Պարրոտի և նրա արշավախմբի դեպի Արարատ բազմաթիվ փորձերից հետո կատարած պատմական առաջին հաղթական վերելքի (1829 թ., սեպտեմբերի 27) նկարագրությանն ու նորահայտ մանրամասներին:

Ա. Մելքոնյանն իր աշխատության Զորրորդ գլխում «Նոր արշավախմբեր՝ դեպի Արարատ (XIX-XX դարեր)», ներկայացրել է 19-րդ դ.

Ակադեմիական նոր հրատարակություններ

1. Հեղ. կոլեկտիվ - Հանդաբերդի վանքը և նրա պեղումները
2. Авт. Коллектив - Актуальные проблемы интегративной деятельности и пластичности нервной системы (Международная научная конференция посвященная 80-летию со дня рождения академика В. В. Фанарджяна).
3. Հ. Ավագյան - Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների գնահատումն ըստ մարդկերի (մաս II):
4. Հեղ. կոլեկտիվ - Արտահանման աճի և տնտեսության մասնագիտացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:
5. Գ. Բարսեղյան, Գ. Հարությունյան - Քաղաքական PR. Նրա դրսևորման հայաստանյան առանձնահատկությունները:
6. «Էսթետիկայի հարցեր (հետազոտությունների ժողովածու)», գիրք 4 (կազմող Յա. Խաչիկյան):
7. Ժ. Խաչատրյան - Միսիանի դամբարանը (մ. թ. ա. I դարի երկրորդ կես):
8. Հեղ. կոլեկտիվ - Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական երրորդ նստաշրջանի նյութեր:
9. Հեղ. կոլեկտիվ - Հայ արվեստի հարցեր (գիտական հոդվածների ժողովածու, գիրք II):
10. «Վաստակաշատ գիտնականներ» պր. 6 (Սբբոտի Լիսիցյան, Կենսամատենագիտություն):
11. Հեղ. կոլեկտիվ - Armenia in the cultural context of east and west.

Երկրորդ եռամսյակում լույս է տեսել ԳԱԱ 14 անուն հանդեսների 16 համար:

Գիտություն Ի տեղի գլխավոր խմբագրի՝
Ա. ՏԵՐ-ԳՍԲԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման
վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 21.06.2009 թ.:
"ГИТУТИОН" ("Hayka") gazeta HAH RA